647 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

VII դարի 30—40-ական թթ. պարսկա-բյուզանդական հակամարտությանը փոխարինեց արաբա-բյուզանդականը և Հայաստանը կրկին դարձավ պատերազմական գործողությունների թատերաբեմ։ Բյուզանդական կայսրությունը չկարողացավ լուրջ դիմադրություն ցույց տալ խալիֆայությանը, որի հարվածների տակ կործանվեց Սասանյանների պետությունը[1]։ *Պարսկա-բյուզանդական երկարատև նվաճումների ամբողջ ծանրությունը կրած հայ ժողովուրդը սկսեց ճաշակել նաև նրանց պարտությունների դառնությունը։*

Կոստաս II-ը (641—668) շարունակում էր Մավրիկիոսի (582—602) ժամանակ արդեն ծրագրային բնույթ ստացած նվաճողական քաղաքականությունը Հայաստանի հանդեպ, որի էությունը երևում է Մավրիկիոսի հրամանով խոսրով II Փարվեզին (590—628) գրված «գիր ամբաստանութեան» բովանդակությունից[2]։ *Հայկական վաղ ֆեոդալական պետության վերացումից (428 թ.) հետո օտար զավթիչների նվաճողական քաղաքականությունը, երկրի ներքին՝ ֆեոդալական պառակտման պայմաններում, VII դարի 30-ական թթ. վերջին Հայաստանը հասցրեց խոր քաղաքական ճգնաժամի, որի մասին վկայում է Սեբեոսը. «Անմիաբան լեալ ամենայն ազատացն՝ կորուսին զերկիրս Հայոց»*[3]։ *Ֆեոդալական դարաշրջանում օտար նվաճողների վարած քաղաքականությունը (որն արտահայտվում էր զանգվածային գաղթերով, ասիմիլյացիայով և բնաջնջմամբ) մոխրացնում էր հայ ժողովրդի կենսական ուժերը*[4]։

Բյուզանդական կայսրությունը, միջազգային այնպիսի բարդ իրավիճակում, որպիսին էր Արաբական խալիֆայության նվաճումների սկզբնական ժամանակաշրջանը, Հայաստանի հանդեպ վարած քաղաքականության ոլորտում խճճվել էր իր սեփական մեքենայությունների մեջ։ Այդ են վկայում բյուզանդական զորավար Պոռկոպի վարքագիծը և դրա հետևանքները, Սմբատ Խոսրով Շում Բագրատունու որդու՝ Վարազտիրոցի և Թեոդորոս Ռշտունու հետ կապված իրադարձությունները, բյուզանդական պաշտոնյա Թումասի գործողությունները և այլ դեպքեր[5]։ *Նման պայմաններում դժվար էր կայսրության հետ ընդհանուր ճակատով դիմակայել խալիֆայության առաջխաղացմանը։ Հայ-բյուզանդական ռազմական համագործակցությունը կարճատև իրողություն էր։ Հայ ժողովուրդը ստիպված էր պայքարել ոչ միայն արաբական աս-*

---

1 *Տե՛ս* Ю. Кулаковский. История Византии. Т. III, Киев, 1915, с. 156—159. Е. А. Беляев. Арабы, ислам и Арабский халифат в раннее средневековье. М., 1966, с. 138—139.

2 *«Պատմութիւն Սեբէոսի», աշխատ. Գ. Վ. Աբգարյանի. Երևան, 1979, էջ 86—87։ Ն. Ակինյանը գրում է. «Մորիկ կայսր հայ ազգը բոլորովին տկարացնելու համար՝ միայն իրեն շահավոր գաղափար մը կը շինե. կ՚ուզե կամաց կամաց հայերը բովանդակ Թրակիա փոխադրել, որ հոն վայրենի ազգերու հետ կռվելով՝ սպառին» (Ն. Ակինյան. Սեբէոս եպիսկոպոս Բագրատունյաց և յուր Պատմութիւն ի Հերակլ. «Մատենագրական հետազոտություններ», հ. Բ. Վիեննա, 1924, էջ 42—43)։*

3 *Սեբեոս, էջ 134։ Հմմտ. «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց». Թիֆլիս, 1912, էջ 82։*

4 *Այդ իրողությունը պատկերավոր արտացոլվել է Դանիել Վարուժանի բանաստեղծական խոսքում. տե՛ս Ցեղական ոգին. «Անահիտ», № 3—5, 1907, էջ 56։*

5 *Սեբեոս, էջ 143—144։ «Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց». Ս. Պետերբուրգ, 1887, գլ. Բ, էջ 7։*

պատակությունների, այլև Բյուզանդական կայսրության մեքենայությունների դեմ։

Սեբեոսի «Պատմությունը» հիմնական աղբյուր է VI դարի վերջին տասնամյակների—VII դարի 50-ական թթ. (մինչև 661 թ.) Հայաստանի ներքին կյանքը, հարևան երկրների հետ ունեցած հարաբերությունները, VII դարի առաջին տասնամյակների պարսկա-բյուզանդական պատերազմները և այնուհետև արաբական նվաճումների սկզբնական շրջանը լուսաբանելու համար։ Փորձենք քննել Սեբեոսի «Պատմության» ԽԴ և ԽԵ գլուխներում պարունակվող նյութը՝ դեպի Հայաստան կատարած արաբական հերթական արշավանքի մասին, որին բազմիցս անդրադարձել են հետազոտողները։

ԽԴ գլխի ժամանակագրական հենքն են կազմում Հերակլ կայսեր (610—641) մահվան, նրա որդիների՝ Կոստանդին III-ի և «Երակլոսի» (641 թ.), այնուհետև թոռան՝ Կոստաս II-ի (641—668) գահակալության առաջին, երկրորդ և հինգերորդ (646 թ.) տարիների մասին եղած տեղեկությունները։ ԽԴ գլուխն ավարտվում է այսպես. «Եւ եղև ի գալ միւսում ամի եկն զաւրն Իսմայելի յԱտրպատական, և բաժանեցան յերիս։ Առաջ մի յԱյրարատ, և առաջ մի ի Սեպհական գնդին կողմանսն, և առաջի մի յԱղուանս։ Արդ՝ որք ի կողմանս Սեպհական գնդին՝ արշաւեալ սփռեցան և հարեալ զամենայն կողմանսն զայնոսիկ սրով սուսերի, առին զաւար և զգերութիւն։ Եւ եկին ժողովեցան ի Հէրեան, և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ։ Եկին ի յՈրդսպու, և ոչ նմա ինչ կարացին առնել։ Գնացին անտի և շանակեցան յԱրծափս, հանդէպ բերդին առ ջրովն։ Եւ սկսան պատերազմել ընդ բերդին, և բազում աւճիրս վնասուց գործեցին անդ ի բերդէն։ Արդ՝ էր նոցա ի թիկանց կողմանէ եւ ի դլուխ անդր յԱսորենայ կողմանէ՝ որում Կախանակտուցն կոչեն։ Արդ՝ իջին ընդ այն արք ի վայր ի բերդէն՝ երթալ խնդրել ի բերդէն Դարաւնից զաւր յաւգնականութիւն իւրեանց։ Եւ ետ նոցա Սմբատ Բագրատունի. որդի Վարազ Սահակայ՝ արս Խ։ Եւ գնացեալ ի գիշերի ելին ի բերդն և ոչ զգուշացան տեղւոյն։ Եւ գիտացին Իսմայելացիքն զտեղին, և գնացեալ ի նոյն հետին ելին ի բերդն, և կալան զտեղին մինչև ցառաւաւտն։ Եւ արս Ժ պահապանս տեղւոյն ըմբռնեցին ի քուն և սպանին»[6]։

Հետազոտողների մոտ այս արշավանքի տարեթվի մասին ընդհանուր կարծիք գոյություն չունի։ Եվ դրա պատճառն են հանդիսացել Սեբեոսի «Պատմության» հաջորդ գլխի հետևյալ հատվածի առաջին տողերը. «Եւ եղև յամին երկրորդի Կոստանդնի (Կոստաս II—Է. Դ.), յամսեանն հոռի, որ աւր ԻԳ էր ամսոյն, յաւուր կիւրակէի ընդ առաւաւտս մնեցին Իսմայելացիքն ի բերդին վերջոյ և առաջոյ, և հարին զնոսա սրով սուսերի։ Եւ բազումք գահավէժ լեալ սատակէին։ Եվ զկանայս և զմանկունս իջուցին ի բերդէն, կամէին սատակել։ և ոչ գոյր թիւ գերւոյն. և անասուն պաճարացն բազում յոյժ։ Եւ եղև ի վաղիւ առաւաւտուն եկն եհաս ի վերայ նոցա գաւրավարն Հայոց Թէոդորոս զաւրու իւրով և յարձակեցաւ ի վերայ նոցա և եհար զնոսա անհուն կոտորածով։ Եւ էին նոքա երեք հազար ընտիր սպառազէնս յամենայն զաւրացն Իսմայելի, և ոչ ոք զերծաւ ի նոցանէ. բայց սակաւ ճողոպրեալք հետևակք երթեալ ամրացան ի Շամբին։ Եւ սպրեցոյց տէր յաւուր յայնմիկ զբազմութիւն գերւոյն ի ձեռաց Իսմայելացւոցն. և զԻսմայել խորտակեաց կործանմամբ մեծաւ. և մեռան Բ իշխանքն Իսմայելի, Աւթման և Ոգբայ։ Եւ եղև յաղթութիւն մեզ զաւրավարին Հայոց»[7]։

Է. Դյուլորիեն, Մ. Ղազարյանը, Մ. Օրմանյանը, Ն. Ակինյանը, Ս. Մելիք-Բախշյանը և ուրիշներ այս արշավանքը թվագրում են 643 թ.[8], Մ. Զամ-

---

6 Սեբեոս, էջ 145։

7 Նույն տեղում, էջ 146։

8 Ed. Dulaurier. Recherches sur la chronologie arménienne technique et historique. T. I, Paris, 1859, p. 231—232; M. Ghazarian. Armenien unter der arabischen Herrschaft. Marburg, 1903, S. 29, Anm. 1; Մ. Օրմանյան, Ազգապա-

չյանը՝ 644 թ.[9], Յու. Կուլակովսկին՝ 647 թ.[10]։ Հ. Մանանդյանը և, նրան հետևելով, Բ. Առաքելյանը ու Ա. Տեր-Ղևոնդյանը գտնում են, որ այս արշավանքը, որի ընթացքում գրավվեց Արծափը, տեղի էր ունեցել 650 թ.[11]։ Հ. Մանանդյանի հիմնական փաստարկները հետևյալներն են. 1) «Յամին երկրորդի Կոստանդնի» ընթերցվածը աղավաղություն է։ «Սկզբնական բնագրում եղած պիտի լինի «յամին Ը երորդի Կոստանդնի» կամ «յամին Թ երորդի Կոստանդնի» և աղավաղումն,— գրում է Հ. Մանանդյանը,— առաջ է եկել Ը կամ Թ և Բ տառերի նմանությունից». 2) «Ղևոնդ երեցը,— շարունակում է Հ. Մանանդյանը,— Արծափի առումը դնում է Դվինի առումից տասը տարի հետո». 3) «Արծափի առումը,— եզրակացնում է Հ. Մանանդյանը,— դրվելու է, ինչպես տեսնում ենք, Պոլոպի կնքած զինադադարից առաջ, որի տարեթիվը Թեոփանի մոտ ևս ցույց է տրված 650 թվականին»[12]։

Հակառակ Հ. Մանանդյանի կարծիքի, Ս. Մելիք-Բախշյանը Սեբեոսի «Պատմության» «եւ եղև յամին երկրորդի Կոստանգնի, յամսեանն հոռի, որ աւր ԻԳ էր ամսոյն, յաւուր կիւրակէի ընդ առաւաւտս...» ընթերցվածը ստույգ է համարում։ Նա հայտնում է, որ կատարել է «ճշգրիտ տոմարագիտական հաշվումներ ու ստուգումներ» և Արծափի գրավման ժամանակն է համարում 643 թ. օգոստոսի 10-ի կիրակի օրը, նշելով, որ «Կոնստանս Բ» (Կոստաս) թագավորել է 642—668 թթ.[13]։

Ս. Մելիք-Բախշյանը, մերժելով 650 թ. որպես Արծափի գրավման տարեթիվ, գրում է. «Պատմիչը, խոսելով բյուզանդական կայսր Կոնստանս II-ի գահ բարձրանալու մանրամասնությունների և ուրիշների կողմից նախկինում աքսորված Սմբատ ասպետ Բագրատունու, Վահան Խոռխոռունու և մյուսների ազատության մասին, ասում է՝ «եւ եղև ի գալ միւսում ամի եկն զաւրն Իսմայելի...»։ Պատմիչի ասած «եւ եղև ի միւսում ամի...» կլինի 643 թ., որովհետև հայտնի է, որ Կոնստանս II-ը գահ է բարձրացել 642 թ.»[14]։ Իրականությունը, սակայն, այն է, որ «եւ եղև ի գալ միւսում ամի» արտահայտությունը Սեբեոսը օգտագործել է Կոստաս II-ի գահ բարձրանալու ոչ թե առաջին, այլ հինգերորդ տարվա (646 թ.[15]) ընթացքում տեղի ունեցած դեպքերի (Վարազ-

---

պատում. Կոստանդնուպոլիս, 1913, § 478։ Ն. Ակինյան. Մատենագրական հետազոտություններ. հ. Գ, Վիեննա, 1930, էջ 301։ Ս. Մելիք-Բախշյան. Հայաստանը VII—IX դարերում. Երևան, 1968, էջ 53—55, 66 և այլն։

9 Մ. Չամչյան. Պատմութիւն Հայոց. հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 345։

10 Ю. Кулаковский, նշվ. աշխ., էջ 202։

11 Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հ. Բ, Բ մասի նյութեր, Երևան, 1960, էջ 193—201։ Բ. Առաքելյան. Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում և հայերի պայքարն անկախության համար. «Գիտական ժողովածու», XX, Արմֆան, Երևան, 1941, էջ 70—71։ А. Тер-Гевондян. Армения и Арабский халифат. Ереван, 1977, с. 33—34. Լևոն այս արշավանքի տարեթիվն է նշում 651 թ. (Լև. Հայոց պատմություն. հ. Բ, Երևան, 1947, էջ 317)։

12 Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 197—200։

13 Ս. Ս. Մելիք-Բախշյան. Դիտողություններ արաբների՝ Հայաստան կատարած առաջին արշավանքների մասին. «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 3, էջ 88։ Կոստաս II-ի գահակալության սկիզբը էդ. Դյուլորիեն նշում է 642 թ., իսկ Արծափի բերդի գրավումը՝ Հոռի 23-ը, տոմարական հաշվումների հիման վրա համարում է 643 թ. օգոստոսի 10-ի կիրակի օրը (Ed. Dulaurier, նշվ. աշխ., էջ 232. Հմմտ. M. Ghazarian, նշվ. աշխ., էջ 29, ծ. 1)։ Ո՞րն է Ս. Մելիք-Բախշյանի տոմարական հաշվումների նորույթը, մանավանդ որ իր հոդվածում նա էդ. Դյուլորիեի աշխատությունը չի հիշատակում։

14 Ս. Ս. Մելիք-Բախշյան. Դիտողություններ արաբների՝ Հայաստան կատարած առաջին արշավանքների մասին, էջ 88։

15 «История императора Иракла», перев. К. Патканяна. СПб., 1862, с. 211, прим. 207. Հմմտ. Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 196։ Սեբեոս, էջ 311, ծ. 498։ Վ. Կ. Իսկանյանը չի պահպանում Սեբեոսի կողմից նշված դեպքերի ժամանակագրական հաջորդականությու-

տիրոջի ընտանիքի և մյուսների ազատվելը աքսորից, Թեոդորոս Ռշտունու կալանավորվելը և տարվելը Կոստանդնուպոլիս, Վարազտիրոցի փախուստը Տայք և այնուհետև նրա մահը, Թեոդորոս Ռշտունու վերադարձը Հայաստան և այլն)[16] մասին գրելուց հետո։ Կնշանակի «ի գալ միւսում ամի» ասելով նա նկատի է ունեցել Կոստաս II-ի 6-րդ տարին՝ 647 թ.։ Բացի այդ, Կոստաս II կայսեր գահ բարձրանալու տարեթիվը այժմ ընդունված է համարել ոչ թե 642 թ., այլ 641 թ.[17]։ Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ Սեբեոսի «Պատմությունում» մինչև Կոստասի թագավորության 5-րդ և հաջորդ տարվա մասին եղած տեղեկությունը, Վաղենտինի հետ կապված դեպքերի առնչությամբ արդեն խոսվել էր Կոստասի երկրորդ տարվա մասին («յերկրորդում ամի Կոստանդի»)[18]։ Իսկ եթե ընդունենք, որ պատմիչը հարկ է համարել Կոստաս II-ի 5-րդ և հաջորդ տարվա («ի գալ միւսում ամի») դեպքերը նշելուց հետո կրկին վերադառնալ 2-րդ տարվան, կստացվի այնպես, թե Սեբեոսը Արծափի դեպքերի մի մասը թվագրել է Կոստաս II-ի 5-րդ տարվան հաջորդած «մյուս տարով», մյուսը՝ 2-րդ տարով։

Իրավացի է Հ. Մանանդյանը, երբ Արծափի հետ կապված անցքերի ժամանակը, հետևելով Սեբեոսի «Պատմության» տվյալներին, նշում է 645/6 թ. հետո[19]։ Նա իրավացի է նաև նշելով, որ անհրաժեշտ է սրբագրել «յամին երկրորդի Կոստանդնի» ընթերցվածը։ Սակայն կարծում ենք, ո՞չ Ղևոնդի հաղորդումը 10 տարի տևած դադարի և ո՞չ էլ Սեբեոսի հաղորդումը բյուզանդական զորավար Պոկոպի՝ արաբների հետ կնքած զինադադարի մասին, չեն կարող հիմք ծառայել այդ ընթերցվածը սրբագրելու այնպես, ինչպես Հ. Մանանդյանն է առաջարկում («յամին Ը երորդի Կոստանդնի» կամ «յամին Թ երորդի Կոստանդնի»)։ Հ. Մանանդյանը, ընդունելով Ղևոնդի հաղորդումը Մարդուցայքի դեպքերի ժամանակագրման («ի քսան և երկրորդ ամի Աբուբաքրայ եւ Ամրի, իշխանացն Իսմայելի») մասին, ինչպես նաև քննելով այլ աղբյուրներ, եզրակացնում է, որ այդ արշավանքը տեղի էր ունեցել 642/3 թ.։ Հ. Մանանդյանը չի գրում Ղևոնդի հաջորդ հաղորդման («դադարեցին (արաբները—է. Դ.) յելանելոյ ի վերայ աշխարհիս Հայոց ամս Գ»)[20] մասին և քննում է պատմիչի կողմից հաղորդած այն տեղեկությունները, ըստ որոնց արաբները գրավեցին Դվինը նշված անձանց իշխանության 26-րդ տարում, իսկ 36-րդում՝ 10 տարի դադարից հետո, գրավեցին Արծափը[21]։ «Սակայն ժամանակագրական այս սխալ

նը։ Վարազտիրոցի մահը նա դնում է մինչ 643 թ., իսկ արաբների կողմից Արծափի բերդի պաշարման ժամանակաշրջանը նշում է «դրանից մի քանի տարի անց», առանց տարեթիվը տալու։ Այնուհետև գրում է, որ Թեոդորոս Ռշտունին հաղթում է նրանց և փախուստի մատնում, որից հետո Թումա անունով ոմն պաշտոնյա դալիս և ձերբակալում է նրան, թեև այնուհետև կայսրը արդարացնում է նրան և վերահաստատում իր պաշտոնում (Վ. Կ. Իսկանյան. Հայ-բյուզանդական հարաբերությունները VII դարում՝ արաբական առաջին արշավանքի ժամանակ. «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 4, էջ 75)։ Ժամանակին Հ. Մանանդյանը վերանայել է Մ. Չամչյանի, Հ. Համբարյանի և ուրիշների կարծիքները, որոնք ենթադրել են, «որ իբր Սեբեոսի մոտ հիշված նախընթաց դեպքերը տեղի են ունեցել Արծափի առումից առաջ՝ 642 կամ 642—644 թվականներին» (Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 196)։

16 Սեբեոս, էջ 143—145։

17 Տե՛ս „Traité d'études Byzantines I. La Chronologie par V. Grumel". Paris, 1958. p. 317, 357. „История Византии". Т. I, М., 1967, с. 369: „The Cambridge Medieval History". Cambridge, 1966, p. 776. Սեբեոսը գրում է. «Եւ նստուցանէ թագաւոր զԿոստաս զորդի Կոստանդնի, և անուանէ յանուն հարն իւրոյ Կոստանդին»։ Պատմիչը Կոստասին նշում է նաև Կոստանդ անունով (էջ 141—142)։

18 Սեբեոս, էջ 142։

19 Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 196։

20 Ղևոնդ, էջ 8. հմմտ. «Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական». Ս. Պետերբուրգ, 1885, էջ 120։

21 Ղևոնդ, էջ 9—11. հմմտ. Ասողիկ, էջ 121—122։

հաշվումները,— եզրակացնում է Հ. Մանանդյանը,— բնավ իրավունք չեն տալիս մեզ մերժելու Ղևոնդի պարզ ու կարևոր այն տեղեկությունը, որ Արծափի առումը տեղի է ունեցել Դվինի առումից տասը տարի հետո»[22]։ 22-րդ տարվա վերաբերյալ հաղորդումը Հ. Մանանդյանը քննում և դնում է 26-րդ տարվա (գիտնականը պաշտպանում է այն կարծիքը, որ Դվինը գրավվեց 640 թ. հոկտեմբերի 6-ին, ուրբաթ) մասին եղած հաղորդումից հետո, ուստի երեք տարվա մասին հաղորդումը նույնպես կտեղաշարժվի և դրանով իսկ կհակադրվի տասը տարվա մասին եղած հաղորդմանը։ Բացի այդ, Հ. Մանանդյանի կողմից նշվող ժամանակագրական (640—650) սահմաններում տասը տարի տևողությամբ դադար չի եղել։ Հ. Մանանդյանը իր աշխատությունում հատուկ գլուխ է նվիրել արաբական 642/3 թ. արշավանքին, իսկ Ա. Տեր-Ղևոնդյանը, բացի 642/3 թ. արշավանքից, նշում է նաև Հաբիրի 644 թ. արշավանքը[23] և այլն։ Ուրեմն, Ղևոնդի երկում պահպանված վերոբերյալ ժամանակագրական տվյալները կա՞մ թերի պետք է համարել, կա՞մ էլ դրանց պետք է այլ մեկնաբանություն տալ։

Ինչ վերաբերում է Պոռոկոպի մասին հաղորդմանը («գնաց... ի Դամասկոս առ Մաւիաս իշխան ղաւրուն Իսմայելի... և առ զհաշտութիւնն և գնաց»)[24], ապա այն իրոք կարևոր փաստ է Արծափի հետ կապված դեպքերը 645/6 և 650 թթ. միջև դնելու, սակայն ամենևին ժամանակագրորեն անմիջապես չի հաջորդում նախորդ նյութին։ Բացի այդ, դաշնագրի կնքմանը նախորդել էին բյուզանգա-արաբական ռազմական գործողությունները[25]։ Սեբեոսի «Պատմության» մեջ այս դաշնագրի մասին եղած ժամանակագրական բնույթի տեղեկությունները[26] քննելով, Գ. Աբգարյանը եկել է այն եզրակացության, որ բյուզանգա-արաբական եռամյա զինադադարը ավարտվել է Կոստանդի (Կոստաս II) 11-րդ (652 թ.) տարում, իսկ 12-րդ (653 թ.) տարում սկսվել են ռազմական գործողությունները[27]։ Ուրեմն, զինադադարը կնքվել է շուրջ 649/50 թ.[28]։

Թեև Արծափի առումը և Պոռոկոպի կնքած զինադադարը Հ. Մանդանյանը դնում է 650 թ., այնուամենայնիվ, այդ տարեթվի կապակցությամբ, դատելով ստորև բերվող տողերից, նա նույնպես որոշ կասկածանք է հայտնում. «Յամին Ը երորդի Կոստանդնի» ուղղումը չի հարմարվում, որովհետև 649 թ. Հոռի 23-ը կամ օգոստոսի 8-ը գալիս է ոչ թե կիրակի, այլ շաբաթ։ Սակայն նույն այդ ուղղումը կարող էր ընդունելի համարվել, եթե հնարավոր լիներ ապացուցանել, որ Սեբեոսի մոտ աղճատված է նաև ամսաթիվը՝ «որ աւր ԻԳ էր ամսոյն» փոխանակ «որ ԻԴ էր ամսոյն»։ Այդ դեպքում՝ Արծափի առումը կընկներ 649 թվի օգոստոսի 9-ին, որովհետև այս թվին Հոռի 24-ը կամ օգոստոսի 9-ը դալիս է դարձյալ կիրակի օր՝ համապատասխան Սեբեոսի վկայության։ Նախադասելի համարելով առաջին ուղղումը՝ Արծափի առման թվականը մենք ենթադրում ենք 650 թվի օգոստոսի 8-ին, կիրակի»[29]։

Բ. Առաքելյանը գտնում է, որ արաբա-բյուզանդական զինադադարը կընքվել էր 648 թ.[30]։ Իսկ Ա. Տեր-Ղևոնդյանը այդ զինադադարի կապակցությամբ Սեբեոսի մոտ եղած հաղորդման մասին չի գրում, այլ առանց քննելու նշում է, որ Դիոնիսիոս Տելմահրեցու տեղեկության համաձայն, 652—653 թթ. բյու-

22 Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 198։

23 А. Тер-Гевондян, նշվ. աշխ., էջ 29—30։

24 Սեբեոս, էջ 147։

25 Նույն տեղում։

26 Նույն տեղում, էջ 164, 169։

27 Նույն տեղում, էջ 357, ծ. 641։

28 Յու. Կուլակովսկին նշում է 651 թ. (Ю. Кулаковский, նշվ. աշխ., էջ 203—204)։

29 Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 199—200։

30 Բ. Առաքելյան. նշվ. աշխ., էջ 69։ Նույնի՝ «Ժամանակագրական դիտողություններ». «Տեղեկագիր» ՍՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալի, 1 (6), 1941, № 1 (6), էջ 62։

զանդական պաշտոնյա Պոռկոպը արաբների հետ զինադադար կնքեց[31]։ Ինչպես տեսնում ենք, Բ. Աւաքելյանը և Ա. Տեր-Ղևոնդյանը 650 թ. Արծափի դրավման մասին Հ. Մանանդյանի կարծիքն ընդունելով հանդերձ, այն զրկում են վերը նշված երրորդ ապացույցից, որպիսին Հ. Մանանդյանը համարում էր իր կողմից առաջ քաշած ենթադրությունը, թե Արծափի առման և Պոռկոպի կնքած զինադադարի մասին Սեբեոսի մոտ եղած հաղորդումները միևնույն՝ 650 թ. են վերաբերում։

Սեբեոսի երկի ԽԴ գլխի վերոհիշյալ հաղորդումները ժամանակագրորեն հետևյալ հաջորդականությունն ունեն. «յամին հինգերորդի» Կոստասի II-ի, «ի գալ միւսում ամի», որի կապակցությամբ ԽԵ գլխի առաջին տողը առաջարկում ենք սրբագրել հետևյալ կերպ. «յամին [Զ]» Կոստաս (Կոստանդին) II-ի, «յամսեանն հոռի, որ աւր Ի[Զ] էր ամսոյն, յաւուր կիւրակէի»։ Այսպիսով, արաբական նշված արշավանքը եղել է Կոստաս II-ի վեցերորդ տարում (647 թ.)։ Ուրեմն, Սրծաւփ բերդի առումը տեղի էր ունեցել ՂԶ, հոռի 26, կիրակի (647 թ. օգոստոսի 12, կիրակի)[32]։

Յու. Կուլակովսկին, քննելով Թեոփանեսի և Էլիաս Մծբնեցու հաղորդումները Աբդ-Ալլահ իբն Սաիդի գլխավորությամբ արաբական զորքի Աֆրիկա ներխուժելու մասին, որպես ներխուժման թվական է նշում 647 թ.։ Գիտնականը այնուհետև գրում է, որ նույն (647) թվականին արաբները Ատրպատականի կողմից ներխուժեցին Վանա լճի շրջանը և, բաժանվելով երեք խմբի, ասպատակեցին ամբողջ երկիրը։ Դվինի առումը նա նշում է 647 թ. հոկտեմբերի 6-ին ու թեև Արծափի բերդի մասին չի խոսում, սակայն նշում է, որ Կոգովիտում Թեոդորոս Ռշտունին շատ գերիների ազատեց[33]։ Յու. Կուլակովսկու կարծիքի համար ժամանակագրական տեսակետից հիմք է ծառայել, ըստ երևույթին, Մովսես Կաղանկատվացու վկայությունը՝ Կոստաս II-ի վեցերորդ տարում Դվինի գրավման մասին[34]։ Արաբների կողմից Դվինի գրավման տարեթվի վերաբերյալ պատմիչների հաղորդած տեղեկությունները, ըստ Հ. Մանանդյանի, խառն են ու հակասական և դրանք հիմք են ծառայել «անհաշտելի տարաձայնությունների նաև բանասիրական թե՛ հայ և թե՛ օտար աշխատություններում»[35]։ Դրանց թվին Հ. Մանանդյանը դասում է նաև Յու. Կուլակովսկու վերոհիշյալ կարծիքը։ Եթե այս հարցում Հ. Մանանդյանը իրավացի է, ապա Յու. Կուլակովսկու տեսակետը թերի կլինի Դվինի գրավումը 647 թ. դնելու կապակցությամբ. սակայն մեզ հետաքրքրող արաբական արշավանքը Յու. Կուլակովսկու կողմից 647 թ. թվագրելը ճիշտ է և, ինչպես տեսանք, ապացուցվում է նաև Սեբեոսի ժամանակագրական տվյալների քննությամբ։

647 թ. Հայաստան ներխուժած արաբական զորքի դեպի Սեպհական գընդի կողմերը և Կոգովիտ գավառի Արծափի բերդը արշաված զորախմբի երթուղու մասին նույնպես տարբեր կարծիքներ են հայտնվել՝ կապված այդ երթուղու վրա հիշատակվող մի տեղանվան հետ, որը անցյալ դարի կեսերից կարդացվել է «Յերևան»։ Հետազոտողների մի մասը կարծել է, որ խոսքը

---

31 Ա. Տեր-Գևոնդյան, նշվ. աշխ., էջ 38։ Զինադադարի հարցում կարծում ենք ավելի ճիշտ կլինի հետևել Սեբեոսի շարադրանքին։ Տելմահրեցու մոտ այդ տեղեկությանը նախորդող և հաջորդող հատվածներում („Chronique de Denys de Tell-Mahré, quatrième partie, publiée et traduite par J.-B. Chabot". Paris, 1895, p. 5—9) նկատվում են ժամանակագրական որոշ անճշտություններ։

32 Տոմարական հաշվումները կատարել ենք Բ. Թումանյանի և Հ. Բագալյանի կողմից հրապարակած աղյուսակների հիման վրա (տե՛ս Բ. Ե. Թումանյան. Առձեռն տոմարագույց. Երևան, 1965, էջ 16, 34։ Հ. Ս. Բագալյան. Օրացույցի պատմություն, Երևան, 1970, էջ 35)։

33 Յու. Կուլակովսկին միևնույն ժամանակ գրում է, որ Սեբեոսը այս արշավանքը դնում է Կոստանդի երկրորդ տարում (նշվ. աշխ., էջ 199—202)։

34 «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի». Մոսկվա, 1860, էջ 255։

35 Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 183։

այժմյան մայրաքաղաք Երևանի մասին է (Հ. Շահխաթունյան, Թ. Հակոբյան, Մ. Յովհաննէսյան Ս. Մելիք-Բախշյան և ուրիշներ), մյուսները այն սրբագրել և մեկնում են «Հեր» (Հ. Մանանդյան, Գ. Աբգարյան). գոյություն ունի նաև այն կարծիքը, թե տեղանունը համապատասխանում է Առեստավանին (Թ. Ավդալբեգյան)[36]։

Գ. Աբգարյանը Սեբեոսի «Պատմության» նոր հրատարակությունում, ի տարբերություն բոլոր տպագրերի և անցյալ դարակեսին ընդօրինակված ձեռագրերի, այդ տեղանունը, ըստ Մատենադարանում պահվող № 1343 ձեռագրական պատառիկի և № 2639 ձեռագրի, ուղղում է «ի Հէրևան» և այն մեկնում «Հեր և անդ», նշելով, որ դրանով հաստատվում է Հ. Մանանդյանի կարծիքը՝ «Երևան» անունը «Հեր»-ով փոխարինելու մասին»[37]։ Գ. Աբգարյանի վերականգնած «ի Հէրևան» ընթերցվածը մեզ համար խիստ արժեքավոր է այն տեսակետից, որ, ինչպես ստորև կնշենք, մենք այն նույնացնում ենք Ասողիկի կողմից հիշատակվող մի տեղանվան հետ։

Սեբեոսի «Պատմության» վերոհիշյալ հաղորդումներին զգալիորեն համահնչուն են Ղևոնդի երկի հետևյալ տողերը. «Հագարացիքն... զօր ժողովեալ դարձեալ յարձակեցան ի վերայ աշխարհիս Հայոց. որոց էին գլխաւորք Օթման և Օգբայ։ Եւ իբրև հասին ի սահմանս Հայոց՝ յերիս բաժանեալ առաջս՝ սփռեցան յասպատակս իւրեանց։ Առաջ մի հատեալ ընդ կողմն Վասպուրական աշխարհին՝ առին զաւանս և զամրոցս որ մինչև ի Նախջաւան քաղաք. և առաջ մի ընդ կողմն Տարօնոյ։ Եւ միւս առաջ հասեալ ի Կոգովիտ՝ պաշարէին զամրոցն Արծափաց»։ Այնուհետև Ղևոնդը պատմում է ամրոցը գրավելուց հետո թշնամու կողմից գործած ոճրագործությունների և Թեոդորոս Ռշտունու գլխավորած հայոց զորքի կողմից նրանց կրած պարտության մասին[38]։ Համարյա նույն տեղեկություններն է հաղորդում Ասողիկը[39]։

Սեբեոսի և Ղևոնդի (հմմտ. Ասողիկ) հաղորդումների համադրությունը ցույց է տալիս, որ Ղևոնդը, թեև գիտի արաբական զորքի երեք խմբի բաժանվելու մասին, սակայն փաստորեն նշում է այն վայրերը, որոնք համապատասխանում և լրացնում են Սեբեոսի կողմից հիշատակված երկրորդ զորախմբի երթուղու մասին եղած տեղեկությունները։ Անհրաժեշտ է նշել, որ Կոգովիտը, որը Այրարատ նահանգի 13-րդ գավառն էր[40], չի եղել դեպի Այրարատ գնացած արաբական առաջին զորախմբի երթուղու մեջ։

Այսպիսով, արաբական երկրորդ զորախմբի երթուղին հետևյալն էր. ըստ Սեբեոսի՝ «կողմանք Սեպհական գնդին»—Հէրևան—Կոգովիտ։ Ըստ Ղևոնդի՝ «կողմն Վասպուրական»[41]—«կողմն Տարօնոյ»—Կոգովիտ։

---

36 Այս հարցի շուրջ գոյություն ունեցող կարծիքների մանրամասն քննությունը տե՛ս Գ. Վ. Աբգարյան. «Երևանի» բերդի հնագույն հիշատակությունը. ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1972, № 8, էջ 24—31։ Հետազոտողները, ենթադրելով, որ Սեբեոսի երկում խոսքը գնում է Երևանի մասին, նշել են, որ այդ «հաղորդումը VII դ. Երևանի մասին միակ հիշատակությունը չէ» և վկայակոչել են նաև Հովհաննես Դրասխանակերտցու (էջ 92) և Սամվել Անեցու («Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի դրոց պատմագրաց». Վաղարշապատ, 1893, էջ 83) հիշատակությունները «Երևանի կռվի» մասին (տե՛ս Թ. Խ. Հակոբյան, Ա. Պ. Սիմոնյան. Երևան 2750. Երևան, 1968, էջ 31)։ Վերջերս Ա. Տեր-Ղևոնդյանը, հիշատակելով Հ. Մանանդյանի և Գ. Աբգարյանի տեսակետը, միևնույն ժամանակ կարծիք է հայտնել, որ «Երևանը» գտնվում էր Վասպուրականում (նշվ. աշխ., էջ 34 և ծ. 83)։

37 Սեբեոս, էջ 145, 314, ծ. 512։ ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1972, № 8, էջ 30—31։

38 Ղևոնդ, գլ. Գ, էջ 11։ Հ. Մանանդյանը նշել է, որ Սեբեոսի և Ղևոնդի երկերում Արծափի առման մանրամասնությունները համապատասխանում են միմյանց (նշվ. աշխ., էջ 194—195)։

39 Ասողիկը «կողմն Տարօնոյ» փոխարեն նշում է «ի Տարօն» (Ասողիկ, էջ 121—122)։ Պատմիչը Նախճավանի պաշարման մասին չի հիշատակում։

40 Տե՛ս Ս. Տ. Երեմյան. Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի. Երևան, 1963, էջ 59։

41 Նախճավան քաղաքի հիշատակությունը պետք է լիներ այն իրողության արտացոլումը, որ Ղևոնդը, ըստ երևույթին, տեղյակ էր արաբների կողմից այդ տարի դրան հասնելուն և բացի

Հայագիտության մեջ պարզված է, որ «կողմանք Սեպհական գնդին» համապատասխանում է Վասպուրականը։ Հարցի քննությունը սկիզբ է առել Ղ. Ալիշանի այն դիտողությունից, որ Մարդպետական տոհմը «կոչվել է նաև «Սեպհական»[42]։ Այդ նույնությունը առկա է «Գիրք թղթոցում»[43]։ Իսկ Հ. Հյուբշմանը գրում է, որ «կողմանք Սեպհական գնդին» նշանակում է Տուրուբերան նահանգը, նշելով նաև, որ դրանք ճիշտ իրար չեն համապատասխանել[44]։ Գ. Փառնակը քննադատում է Հ. Հյուբշմանի տեսակետը և կարծիք է հայտնում, որ «ցարդ անլոյծ մնացած «Սեպհական գնդին կողմանք»-ի նշանակությունն է Վասպուրական»[45]։ Ն. Ադոնցը քննում է «Գիրք թղթոցի» նյութը և «Մարդպետական»—«Սեպհական» նույնության հարցում հետևում է աղբյուրին, ինչպես նաև նշում է. «Васпуракан» կամ «Сепуракан»[46]։ Թ. Ավդալբեգյանը նույնպես այն կարծիքին է, որ «կողմանք Սեպհական գնդին» նույն Վասպուրականն է[47]։ Բ. Առաքելյանը այլ կարծիքի է։ Նա գրում է. «Մյուս բանակը հետապնդելով Սեպհական գնդին...»[48]։ Անհրաժեշտ է նշել Ն. Ադոնցի այն կարծիքը, որ աղբյուրներում «Սեպհական» և «Վասպուրական» անունների զուգահեռ օգտագործումը պետք է բացատրվի նրանով, որ աշխարհագրականորեն դրանք տարբեր մեծություններ են՝ մեկը հարաբերում է մյուսին, ինչպես մասն ամբողջին[49]։

Արաբական զորախումբը «Հէրևան» էր հասել, ըստ Սեբեոսի, «Սեպհական գնդի կողմերը» ասպատակելուց հետո։ Քանի որ Սեբեոսի և Ղևոնդի հաղորդումներում առաջին («Սեպհական գնդի կողմեր», «կողմն Վասպուրական») և երրորդ (Կոգովիտ) պատմաաշխարհագրական տեղեկությունները նույնն են, մնում է միայն հետևեցնել, որ «Հէրևանը» պետք է գտնվեր «Տարոնի կողմերում» («կողմն Տարօնոյ»)։ Անանիա Շիրակացու «Աշխարհացույցից» հայտնի է. «Տարուբերան որ է Տարօն» («Տարուբերան [որ է կողմն Տարաւնոյ]»)[50]։ Հ. Հյուբշմանը գրում է. «Եթե այս (Տարուբերան կամ Տուրուբերան—Է. Դ.) երկրին անուն տալ ուզվեր՝ առանց այս կամ այն գավառը թվել ուզելու, մերձավորապես կըսվեր «կողմն Տարաւնոյ», վասն զի Տարոն ամենեն ծանոթն էր»։ Եվ այնուհետև, որպես փաստարկ նշում է Փավստոս Բուզանդի երկի հետևյալ տողերը. «Յարշամունեաց տեղացն ի նահանգէն Տարօն գաւառէն»[51]։

այդ այն Վասպուրականի ծայր արևելյան գավառներից՝ նույնանուն Նախճավանի գավառում էր գտնվում։ Պատմիչը նշելով, որ արաբները ասպատակեցին «կողմն Վասպուրական աշխարհին», դրանով իսկ նշում է նաև դրա արևելյան ծայրագավառներից մեկը։

42 Ղ. Ալիշան. Այրարատ. Վենետիկ, 1890, էջ 420։

43 «Գիրք թղթոց». Թիֆլիս, 1901, էջ 41, 70, 73, 76, 81, 146, 151, 196, 558։

44 Հ. Հյուբշման. Հայոց տեղաց անուններ. Վիեննա, 1907, էջ 81։

45 Գ. Փառնակ. «Հայ նախարարները». «Անահիտ», Հանդէս Ամսեայ, 1907, №№ 1—2, էջ 21, ծ. 1։ Տե՛ս նաև Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. Դ, Երևան, 1979, էջ 202։ Գ. Փառնակը չի դրում արաբական նախորդ արշավանքների մասին և նշված արշավանքը առաջինն է համարում։

46 Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. Спб., 1908 (Ереван, 1971), с. 234, 318—320.

47 Թ. Ավդալբեգյան. Հայագիտական հետազոտություններ. Երևան, 1969, էջ 141—145։ Գ. Արգարյանը համամիտ է այս կարծիքին (տե՛ս Սեբեոս, էջ 313—314, ծ. 511)։

48 Բ. Առաքելյան. Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում և հայերի պայքարն անկախության համար, էջ 70։

49 Н. Адонц, նշվ. աշխ., էջ 319։

50 «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ». Վենետիկ, 1881, էջ 29։ Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 85, 107։

51 «Փավստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց». Ս. Պետերբուրգ, 1883, էջ 104։ Հ. Հյուբշման. նշվ. աշխ., էջ 80—81։

Այսպիսով, եթե «կողմն Տարաւնոյ» կարող էր նաև Տուրուբերան նահանգի իմաստով գործածված լինել, ուրեմն «Հէրևանը» պետք է փնտրել Տուրուբերանում։ Եթե ընդունենք, որ արաբական ասպատակող զորախմբի երթուղին անցել է Վասպուրականով և Տուրուբերանով, ուրեմն կարելի է եզրակացնել, որ Այրարատ նահանգի Կոգովիտ գավառին այն հասել է Տուրուբերան նահանգի Տարոն, Հարք և Ապահունիք գավառներով։ Կարծում ենք, որ «Հէրևան» բերդը պետք է փնտրել Հարքում։ Այն պետք է համապատասխաներ Դավիթ Անհաղթի (V դար)՝ Ասողիկի հիշատակած ծննդավայրին. «Դաւիթ՝ աշակերտ Մովսիսի ի Հարք գաւառէ ի Հերեան գեղջէ»[52]։ «Հէրևան» և «Հերեան» ընթերցվածները ըստ իս պետք է վերաբերեն միևնույն բնակատեղին։

Այսպիսով «Սեպհական գնդի կողմերը» ներխուժած արաբական զորախումբը, ասպատակելով Վանա լճից հարավ և արևմուտք ընկած շրջանները, ներխուժեց Տուրուբերան («կողմն Տարօնոյ»)։ Այն անհաջողության մատնվեց Հարք գավառի Հէրևան (Հերեան) բերդի մոտ։ Այնուհետև, Կոգովիտում չկարողանալով գրավել Որդսպուի բերդը, արաբական զորքը պաշարում է Արծափի բերդը։ Պաշարվածներին Կոգովիտի Դարույնք բերդից օգնություն ուղարկելու կապակցությամբ Սեբեոսը հիշատակում է Սմբատ Բագրատունուն, որի անձնավորության մասին տարբեր կարծիքներ գոյություն ունեն։ Բ. Առաքելյանը գրում է. «Երկրորդ բանակը Օթմանի և Օգոմայի գլխավորությամբ, Երևանի և Որդսպուի անհաջող պաշարումից հետո, շարժվելով դեպի Արծափ մեծ բերդը, պաշարում է այն։ Բերդի պաշտպանությունը գլխավորում էր Սահակ Բագրատունին, Վարազտիրոցի որդին։ Արաբական զորքը մեծ վնասներ է հասցնում բերդին, բայց չի կարողանում գրավել։ Աշոտ Բագրատունին Դարոնից բերդից (Դարաւն) օգնություն խնդրելու համար 40 մարդ է ուղարկում այնտեղ»[53]։ Բ. Առաքելյանը գտնում է, որ Սահակը Վարազտիրոցի որդին էր և գլխավորում էր Արծափի պաշտպանությունը, իսկ Դարույնքի գլխավոր համարում է Աշոտ Բագրատունուն։ Այս ենթադրության հիմքը մեզ հայտնի չէ։

Սեբեոսը Արծափի պաշտպաններից ոչ մեկի անունը չի տալիս, իսկ Դարույնքի իշխան է նշում Սմբատ Բագրատունուն՝ Վարազ-Սահակի որդուն։ Արծափի և Դարույնքի կապակցությամբ պատմիչը Աշոտ Բագրատունուն չի հիշատակում։ Սեբեոսը հիշատակություն ունի Պապ Բագրատունու հոր՝ Աշոտ ասպետի մասին, որ վերաբերում է 596 թ.[54]։

Գ. Վ. Աբգարյանը քննում է Է. Դյուլորիեի, Ղ. Ալիշանի, Մ. Յովհաննէսյանի կարծիքները, որոնք գտնում են, որ Սեբեոսի մոտ խոսքը պետք է Վարազտիրոցի և նրա որդի Սմբատի մասին լինի։ Գ. Վ. Աբգարյանը եզրակացնում է. «Արդ, եթե Արծափի պաշտպանները գնացել են հենց «ի Դարիւնս» և այնտեղ հանդիպել են Սմբատ Բագրատունուն՝ կնշանակի զա միևնույն Սմբատն է, Վարազ-Տիրոցի որդին։ Մենք «Վարազ-Սահակը» կարբագրեինք «Վարազ-Տիրոց», եթե վստահ լինեինք, որ Վարազ-Տիրոցը չի կոչվել նաև Վարազ-Սահակ»[55]։

---

52 Ասողիկ, էջ 80—81։ Դավիթ Անհաղթի ծննդավայրի մասին տե՛ս նաև՝ Ղ. Ինճիճյան. Ստորագրութիւն հին Հայաստանեայց. Վենէտիկ, 1822, էջ 120։ Ն. Ակինյան. Դավիթ Հարքացի Անհաղթ Փիլիսոփայ. Վիեննա, 1959, էջ 71։ Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. հ. Բ, Երևան, 1944, էջ 24։ Հերեանի տեղագրության մասին Հարք գավառում, Խաչան լճից հարավ՝ Կորի գավառակում տե՛ս С. Т. Еремян. Тарон в древности и средних веках (ներդիր քարտեզ Ղ. Վ. Այվազյանի՝ «История Тарона и армянская литература IV—VII вв., Ереван, 1975 գրքում)։ «Գիրք թղթոցում» (էջ 151) հիշատակվում է «Դաւիթ Երևանայ» երեցը (VII դ.), որին չպետք է շփոթել Դավիթ Անհաղթի հետ, որը, ինչպես նշվեց, Հարք գավառի Հերեան գյուղից էր։

53 Բ. Առաքելյան. նշվ. աշխ., էջ 70։

54 Սեբեոս, էջ 94։

55 Նույն տեղում, էջ 315, ծ. 516։

Ն. Ակինյանը հավանական է համարում, որ Վարազ-Սահակը Վարազտիրոցի եղբայրն էր, որի որդու անունը նույնպես Սմբատ էր[56]։ Ն. Ակինյանի այս կարծիքը պետք է ճիշտ լինի։ Այն կարելի է հիմնավորել Սեբեոսի հաղորդումներով։ Քրիստափոր Բ Ապահունի կաթողիկոսը (628—630) Վարազտիրոցի մարզպանության ժամանակ «բազում խռովութիւն յուղեաց և արկ սուր ի մէջ ընդ ասպետ և ընդ եղբայր իւր չարախաւսութեամբ»[57]։ Այստեղ խոսքը Սմբատ Խոսրով Շում Բագրատունու որդիների՝ Հայոց մարզպան, ասպետ Վարազտիրոցի և նրա եղբոր մասին է։ Վարազտիրոցը 646 թ.[58] Տայքում մահացավ։ «Եւ բարձին զմարմին նորա և տարան թաղեցին առ հաւրն իւրում ի Դարիւնս։ Եւ զորդի նորա զանդրանիկ, որում անուն էր Սմբատ, կարգեաց արքայ ի պատիւ հաւր իւրոյ. տուեալ նմա զիշխանութիւնն բնիկ տանուտէրութեանն ասպետութեան, և արար զնա դրունգար զաւրաց իւրոց։ Եւ նմա կին ի տանէն Արշակունեաց և յիւրոց մերձաւորաց, և... արձակեաց ի բանակն առ զաւրս իւր»[59]։ Հ. Մանանդյանը այս հաղորդումից ճիշտ եզրակացնում է, որ Սմբատը ուղարկվել էր բանակ[60]։ Իսկ թե որտեղ էր գտնվում Վարազտիրոցի որդու՝ Սմբատ դրունգարի գլխավորած զորքի բանակատեղին, իմացվում է Սեբեոսի «Պատմության» հետևյալ տողերից. «Եւ Սմբատ էր իշխան զաւրու Թրակացւոց իշխանացն»[61]։ Վարազտիրոցի մահվանից հետո նրա որդուն՝ դրունգար Սմբատին Կոստաս II-ը ուղարկում է Թրակիա, որտեղ հայ ռազմական ուժերի մի մասը մասնակցում էր կայսրության շահերի համար մղվող մարտերին՝ կայսրության սահմանները ներխուժող ցեղերի դեմ։ Սմբատ Բագրատունու մեկնումից հետո կայսրը «արձակեաց զԹէոդորոս Ռշտունեաց տէրն ի Հայս մեծաւ պատուով, և ետ նմա զնոյն իշխանութիւն զաւրավարութեան... Եւ եկն կարգեցաւ ի նոյն իշխանութեանն»[62]։ Այնուհետև հաջորդ տարին՝ 647 թ. տեղի ունեցավ արաբական խնդրո առարկա արշավանքը։

Այսպիսով, Արծափի պաշարման ժամանակ Դարույնքի իշխանը, ինչպես ճիշտ ենթադրել է Ն. Ակինյանը, Վարազտիրոցի եղբոր՝ Վարազ Սահակի որդի Սմբատ Բագրատունին էր։ Վարազտիրոցի որդին՝ դրունգար Սմբատ Բագրատունին գտնվում էր Թրակիայում, իսկ Հայոց իշխանը և զորավարը Թեոդորոս Ռշտունին էր, որը հայոց զորքով դալիս և գլխավին ջախջախում է Արծափի բերդը ներխուժած արաբական զորախումբը։ Սեբեոսը գրում է. «Իսկ այն զաւրն, որ ի կողմանս Այրարատեան, եհար սրով մինչև ի կողմանս Տայոց, Վրաց և Աղուանից, առ զաւար և զգերութիւն և եկն էանց ի Նախճաւան

---

56 Ն. Ակինյան. Մատենագրական հետազոտություններ. հ. Գ, էջ 301։ Ս. Տեր-Ղեվոնդյանը այս Սմբատ Բագրատունուն ուղղակի նշում է որպես Վարազ-Սահակի որդի (А. Тер-Гевондян, նշվ. աշխ., էջ 34)։ Ն. Ակինյանը իրավացի է, երբ Վարազ-Սահակի որդուն նույնացնում է Ղևոնդի հիշատակած Սմբատ Բագրատունու հետ, որին Գրիգոր Մամիկոնյանի հետ Մոավիան պատանդ էր վերցրել (Ղևոնդ, էջ 14)։ Սակայն գիտնականը վրիպում է, երբ Վարազ-Սահակի որդուն նույնացնում է Ղևոնդի մեկ այլ հաղորդման մեջ հիշատակվող Սմբատի («զՍմբատ ոմն ի տոհմէ Բագրատունւոյ», Ղևոնդ, էջ 13) հետ (Ն. Ակինյան, նույն տեղում)։ Իրավացի է Ք. Պատկանյանը, ենթադրելով, որ վերջինս Վարազտիրոցի որդին էր («История халифов вардапета Гевонда». СПб, 1862, էջ 131, ծ. 47)։

57 Սեբեոս, էջ 129։ Մ. Օրմանյանը առանց անունները նշելու գրում է, որ Վարազտիրոցը մի քանի եղբայր ուներ (Մ. Օրմանյան, § 457)։

58 Կ. Բասմաջյան. Ժամանակագրական պատմություն Հայոց, արտագրված Թեոդիկի «Ամենուն տարեցույց»-ի 1914 թ. հատորեն, էջ 4։

59 Սեբեոս, էջ 144—145։

60 Հ. Մանանդյան. նշվ. աշխ., էջ 206։

61 Սեբեոս, էջ 163։

62 Նույն տեղում, էջ 145։ Հ. Մանանդյանը Թեոդորոս Ռշտունու կալանավորումը և դատը Կոստանդնուպոլսում նշում է կայացած 646 թ., իսկ վերադարձը Հայաստան ենթադրում է 649 թ. (նշվ. աշխ., էջ 205)։ Այստեղ նշենք միայն, որ հիմք չկա կարծելու, թե Թեոդորոս Ռշտունին մոտ երեք տարի բացակայել է երկրից։ Սեբեոսի մոտ նման տեղեկություն չկա։

առ այն զարդ, որ մարտ եղեալ կռուէին ընդ բերդին Նախճաւանայ։ Բայց սակայն ոչ կարացին առնուլ զնա։ Առին զբերդն Խրամայ և սատակէին զնոսա սրով, և զկանայս և զմանկունս գերի վարեցին»[63]։ Այրարատյան կողմերը գնացած զորախումբը պետք է այնուհետև ներխուժած լիներ Տայոց և Վրաց կողմերը։ Արարատյան զորախմբի երթուղու առնչությամբ հիշատակվող Աղվանքը վերաբերելու է երրորդ՝ Աղվանքի կողմերը ներխուժած արաբական զորքի անցած ճանապարհին։ Այդ զորախումբը պետք է վերադարձած և պաշարած լիներ Նախճավանը։ Ահա այս երրորդին է միանում առաջին՝ Այրարատյան (այնուհետև Տայքի և Վիրքի) կողմերը ներխուժած և ապա վերադարձած զորախումբը։

647 թ. արշավանքի ժամանակ Հերեան (Հէրևան), Որդսպու, Արծափ, Նախճավան բերդերի մոտ արաբների կրած պարտությունները ցույց տվեցին հայ ժողովրդի աննկուն կամքը՝ պայքարել նոր նվաճողի՝ Արաբական խալիֆայության դեմ։

АРАБСКИЙ ПОХОД В АРМЕНИЮ В 647 ГОДУ

Э. Л. ДАНИЕЛЯН

(Резюме)

С началом завоеваний Арабского халифата, со сменой персидско-византийского противоборства арабо-византийским, Армения вновь стала ареной нашествий и военных действий. Сопоставление сообщений Себеоса, Гевонда и Асогика об очередном арабском походе показывает, что арабское войско, вторгшееся со стороны Атрпатакана в Армению, разделилось на три части. Первая опустошила Айрарат, Тайк и Иверию. Вторая часть арабского войска разорила «край Сепакан гунда» (Васпуракан) и вторглась в «край Тарона» (Тавруберан-Туруберан). Захватчики встретили упорное сопротивление у крепости, называемой Себеосом «hЭреван». Относительно локализации этой крепости высказаны разные мнения. Некоторые исследователи (Шахатунян, Т. Акопян и др.) полагают, что речь идет о городе Ереване, другие (Я. Манандян, Г. Абгарян) отождествляют ее с Гером. Высказано также мнение о ее тождестве с Ареставаном (Т. Авдалбекян). Однако, как выясняется, hЭреван *(Հէրևան)* идентичен упоминаемому Асогиком hЕреану *(Հերեան)* в гаваре hАрк (в области Тавруберан). Из области Тавруберан захватчики вторглись в гавар Коговит, где, встретив сопротивление у крепости Ордспу, осадили крепость Арцап, которую затем взяли (12. VIII. 647 г.). Подоспевшее армянское войско во главе с Теодоросом Рштуни разбило их наголову. Третья часть арабского войска вторглась в Албанию и опустошила ее. Возвратившись в Армению, она вместе с присоединившейся к ней первой частью войска осадила Нахчаван. Не сумев взять город, захватчики двинулись к крепости Храм, после взятия которой многих защитников истребили, а женщин и детей увели в плен.

Этот поход некоторые исследователи (Э. Дюлорье, М. Казарян, М. Орманян, Н. Акинян, С. Мелик-Бахшян и др.) датируют 643 годом, другие (Я. Манандян, Б. Аракелян, А. Тер-Гевондян)—650 г. Исследование сообщений Себеоса подтверждает мнение Ю. Кулаковского, согласно которому этот поход имел место в 647 г.

---

63 *Սեբեոս, էջ 146—147։*